ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

«Համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի ներդրման հեռանկարները ՀՀ-ում»

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի ներդրման հեռանկարները ՀՀ-ում»

«Արար» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամը հայտարարում է «Համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի ներդրման հեռանկարները Հայաստանում» թեմայով փորձագիտական հետազոտությունների դրամաշնորհային մրցույթ, որի նպատակն է ֆինանսավորել հետազոտություններ, որոնք կվերլուծեն համակարգի ներդրման իրագործելիությունն ու մարտահրավերները Հայաստանում:

Համապարփակ պաշտպանությունը հայեցակարգ է (կիրառվել է նաև Total Defence անվանումով), որը դուրս է գալիս ավանդական ռազմական ռազմավարությունից և ներառում է ազգային անվտանգության ավելի լայն մոտեցում՝ ներառելով ոչ միայն ռազմական, այլև հասարակության այլ հատվածներ, ինչպիսիք են պետական կառույցները, բիզնեսները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և առանձին քաղաքացիներ: «Համապարփակ պաշտպանության ՆԱՏՕ-ի ձեռնարկում» *(Comprehensive Defence Handbook Volume 1., NATO Special Operations Headquarters, 2020)* Համապարփակ պաշտպանությունը սահմանվում է որպես կառավարության պաշտոնական ռազմավարություն, որն իր մեջ ներառում է ողջ հասարակության մոտեցումը՝ ազգը հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու համար: Այս ռազմավարական մոդելը կիրառվել է մի շարք երկրներում, ինչպես օրինակ Իսրայելում, Ֆինլանդիայում, Էստոնիայում, Սինգապուրում, Ավստրիայում, Շվեյցարիայում և այլն:

Հետազոտության հիմնական **խնդիրներն** են.

1. Ներկայացնել համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի էությունը, հիմնական բաղադրիչներն, առանձնահատկություններն ու պահանջները:
2. Գնահատել Հայաստանում պաշտպանության և անվտանգության համապարփակ համակարգի ներդրման իրագործելիությունը՝ հաշվի առնելով մեկնարկային պայմաններն ու լոկալ առանձնահատկությունները:
3. Վերլուծել համակարգի ներդրման հիմնական խոչընդոտները, հնարավոր օգուտներն ու մարտահրավերները:
4. Տրամադրել պրակտիկ առաջարկություններ Հայաստանի պետական համակարգերում, ենթահամակարգերում, ենթակառուցվածքների և այլ ոլորտներում պաշտպանության և անվտանգության համապարփակ համակարգի արդյունավետ ներդրման համար:՛
5. Ներկայացնել համապարփակ պաշտպանության և անվտանգության մոդելի կիրառման առաջարկություններ՝ շեշտադրելով ռազմական պաշտպանության և ներքին անվտանգության համակարգերի առանցքային բաղադրիչները, ինչպիսիք են պահեստազորի համակարգը, տարածքային պաշտպանության մոդելը, մոբիլիզացիոն մեխանիզմները, ինչպես նաև ռազմական արդյունաբերությունը:

Աշխատանքի **շրջանակը** ներառում է.

1. Պաշտպանության և անվտանգության համակարգերին առնչվող համապատասխան գրականության, զեկույցների և փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրություն
2. Հարցազրույցների անցկացում անվտանգության փորձագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, պետական պաշտոնյաների հետ (ըստ անհրաժեշտության)
3. Համապարփակ մոտեցման միջազգային լավագույն փորձի վերլուծություն և դրա համապատասխանեցման հնարավորությունները Հայաստանի պաշտպանության և անվտանգության առկա համակարգին:

4. Անհրաժեշտ ինստիտուցիոնալ բարեփոխումների, իրավական կարգավորումների և կարողությունների ամրապնդման միջոցառումների ներկայացում, որոնք անհրաժեշտ են Հայաստանում պաշտպանության և անվտանգության համապարփակ համակարգի ներդրման համար:

Հիմնական **ակնկալվող արդյունքներն** են.

1. Ծրագրի հաշվետվություն. աշխատանքային պլան և մեթոդաբանություն (մինչև 5 էջ)
2. Զեկույց. Հետազոտական արդյունքներ և վերլուծություն (մինչև 50 էջ)
3. Արդյունքների հանրային ներկայացում

Առաջարկները կգնահատվեն հետևյալ **չափանիշների** հիման վրա.

1. Համապատասխանություն դրամաշնորհի նպատակներին:
2. Մեթոդական իրագործելիություն:
3. Դիմորդի փորձառություն:
4. Բյուջեի իրատեսություն և ծախսարդյունավետություն
5. Հետազոտության հնարավոր ազդեցություն

Բյուջե

Բյուջեն պետք է ներառի հետազոտության, ճանապարհորդության, հանդիպումների և հաշվետվությունների մշակման հետ կապված ծախսերը:

Ժամանակացույց

1. Առաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ 01.05.2024:
2. Ծրագրի տևողությունը՝ 3-4 ամիս
3. Ակնկալվող մեկնարկի ամսաթիվ 10.05.2024
4. Ակնկալվող ավարտի ամսաթիվ. 31.08.2024

Ծրագիրը ներառում է հետևյալ հիմնական **փուլերը**.

1. **Պլանավորում**. մշակել հետազոտության աշխատանքային պլանն ու գործիքակազմը, սահմանել հետազոտության շրջանակը, նպատակները և մեթոդաբանությունը:
2. **Գրականության ուսումնասիրություն**. Իրականացնել համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգերի վերաբերյալ առկա գրականության մանրակրկիտ վերանայում՝ կենտրոնանալով համապատասխան տեսությունների, շրջանակների և միջազգային լավագույն փորձի վրա:
3. **Տվյալների հավաքագրում**. Հավաքել տվյալներ տարբեր աղբյուրներից, այդ թվում հարցազրույցներ, հետազոտություններ, պաշտոնական փաստաթղթեր և այլն:
4. **Վերլուծություն**. Վերլուծել հավաքված տվյալները՝ բացահայտելու համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի ներդրման հնարավորությունները և մարտահրավերները:
5. **Արդյունքներ**. Ներկայացրել հետազոտության արդյունքները, ներառյալ պաշտպանության և անվտանգության համակարգի առկա վիճակի գնահատումը, միջազգային փորձը և համապարփակ համակարգի ներդրման հեռանկարները:
6. **Առաջարկություններ**. Հետազոտության արդյունքների հիման վրա տրամադրել առաջարկություններ Հայաստանում համապարփակ պաշտպանության և անվտանգության համակարգի ներդրման համար:
7. **Արդյունքների ներկայացում**. Պատրաստել զեկույց, որն ամփոփում է հետազոտության արդյունքները, վերլուծությունները և առաջարկությունները: Զեկույցը ներկայացնել համապատասխան շահագրգիռ կողմերին և փորձագետներին հետադարձ կապի համար: